## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՊԱՏԻՎ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՐԱՄԱՆԼԻՍԻՆ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ ՀՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՑՈՒՑԱԲԵՐՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՐԱՄԱՆԼԻՍԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ՝
ՎԱՍԵՄԱՓԱՅԼ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԱԹԷՆՔ

Վսեմաշուք Տիար Նախագահ,

Աստուծոյ ողորմութեամբ, Մենք՝ առաջին սպասաւորը Հայ Առաքելական Եկեղեցու, հայոց քրիստոնէական հաւատքի բազմադարեան կենտրոն Սուրբ Էջմիածնից Ձեզ ենք բերում Մեր յարգալից ողջոյնը և առ Աստուած առաքում Մեր աղօթքը Ձեր արևշատութեան և Ձեր հայրենանուէր առաքելութեան փայլուն յաջողութիւնների համար, ի փառս հելլեն մեծանուն ժողովրդեան, որ աշխարհի քաղաքակրթութեան պատմութեան հորիզոնի վրայ առաջին ջահակիրը հանդիսացաւ ոգեկանութեան անկորչելի արժէքների, ոգեկանութիւն, որ իր լուսաշող արձագանքը ունեցաւ նաև հայ ժողովրդի քրիստոնէական մշակութային վարթօնքի ճանապարհին, սկսած չորրորդ և հինգերորդ դարերից:

Հայ Եկեղեցին ու ժողովուրդը երախտապարտ են հելլեն ազգին նաև այն մարդասիրական վերաբերմունքի համար, որով առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, բազմահազար հայ գաղթականներ՝ 1915 թուի Օսմանեան ցեղասպանութեան դժոխքից փրկուածներ, ապաստան ու կեանքի

ապահովութիւն գտան Յունաստանում, վայելելով պետական իշխանութեանց պաշտպանութիւնը և հոգատարութիւնը:

Հայ Եկեղեցին ու ժողովուրդը յատկապէս այս օրերին յիշատակում են Զմիւռնիայի յոյների և հայերի կոտորածը 1922-ին, երբ վերապրողներին հելլեն պետութիւնը եղբայրական օգնութեան ձեռք երկարեց ու ապաստան տուեց դժբախտ այդ հայերին ևս: Արդէն վաթսուն տարիներ են անցել այդ ողբերգական իրադարձութիւններից, սակայն համայն հայութիւնը որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, երախտագիտութեամբ յիշում է և բարձրօրէն գնահատում հելլեն պետութեան մեծահոգի օգնութիւնը, ցուցաբերուած կոտորածներից փրկուած հայ գաղթականներին և որբերին:

Արդի աշխարհի խռովայոյզ այս օրերին, վերյիշելով 1915-ի սև տարին ու Զմիւռնիայի 1922-ի աղէտը, Մենք աղօթում ենք, որ նման ողբերգութիւններ չկրկնուեն ոչ մի տեղ և ոչ մի ժողովրդի կեանքում, որ վերջ գտնեն ամէն տեսակի ազգամիջեան թշնամութիւններ, և պետութիւններ ու ազգութիւններ ապրեն խաղաղութեան արևի տակ համերաշխ գործակցութեամբ:

Երախտապարտ սրտով հաստատում ենք նաև մեր օրերին հելլեն պետութեան նոյն հոգատարութիւնն ու լայնախոհութիւնը Յունաստանում բնակող մեր Եկեղեցու զաւակների նկատմամբ, որոնք ապրում են խաղաղ և բարօր կեանքով, վայելելով ամէն տեսակի նպաստաւոր պայմաններ, կազմակերպելու իրենց կրօնական, կրթական ու մշակութային համայնքային կեանքը, իբրև հաւատարիմ ու շինարար քաղաքացիները հելլեն հիւրընկալ հայրենիքի:

Թոյլ տուէք, մեծայարգ Տիար Նախագահ, Ձերդ Վսեմութեանը և հելլեն եղբայր ժողովրդին ներկայացնելու Մեր ամենաբարի մաղթանքները առաջադիմութեան ու ծաղկումի՝ մշտական խաղաղութեան մէջ:

Ամենակալն Աստուած թող յաւէտ անսասան ու պայծառ պահպանէ անմահ Հելլադան, միշտ փառաւորուած իր հանճարի լոյսերով:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ. առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 27 հոկտեմբերի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1161